



ՅՈՎԱՆՆԷՍ ԱՅՎԱԶՈՎԱՐԻ

ԱՅՈՎԱՐԻ մէջ կը խաւարէր Հայ Հորի-
զոնի ամենապայծառ աստեղաց մին, և բովան-
գակ գեղեցկագիտական աշխարհը մեծ կորուստ
մը կ'որդարէր. այեցարդ ծերունի ծովանկարչին
Յովհաննէս Այվազովսքի, կենքձ էր իւր մահ-
կանացուն և առաջին անգամ մեծամեծ մայ-
րաքաղաքներէ կը հեռագրուէր ամենուրեք այդ
զոյժը: Ամիս մ'անցաւ այն օրէն ի վեր, և այդ
տխուր լուրը դեռ եւս կը շրջի աշխարհին ա-
մենահեռաւոր անկիւններն, ամէն կողմ զըտ-
նելով իւր արձագանգն օրագրաց և պարբերա-
կան հանդէսներու մէջ, որոնք կըրպով մը կը
մրցին իրարու հետ՝ չնայախարհիկ հանճարը
զրուստելու մասին: Թուստաստանի, Անգղիոյ,
Ամերիկայի, Իտալիոյ, Գերմանիոյ և Գաղղիոյ
սամինէն աւելի հնդկաստանու լրագրէք ընդար-
ձակ կամ համառօտ կենսագրականներն և զո-
վետանիքն նուիրեցին ի պատիւ հանգուցելոյն
և ազգային թերթերէ (գէթի մինչեւ ցայժմ հրա-
տարակուսածնու մէջ) չգտնուեցաւ մին որ
խորին ոգով ու արտաւսթեմար զգածուած չըլ-
լար, մտածելով ազգին ըրած մեծ կորուստը:
Վեհ հանճար մ'էր Այվազովսքի, և որչափ
ի պատմութենէ կը յիշեցը, առաջին անգամն
էր որ կը ծագէր աստղ մը հանրազգային հո-
րիզոնի վրայ, և իւր ընդարձակ շրջանին մէջ
մինչեւ յաղթական մուտքն, ամենեւին թեթեւ
ամպէ մ'իսկ չէր նսեմանար, անոր մտաւարուող
մ'իսկ չէր նուազեցնիր անոր ճառագայթից
պայծառութիւնը: Առաջին հանճարն էր՝ որոյ
բարձրաւթեան առջեւ նախանձ, հակակրօնութիւն
և ասեղնութիւն և ոչ կը համարձակէին յերեւ-
ւան գայուէ՝ թող թէ իրեն դէմ մաքառուել և
իրեն Ֆրանսիոյ¹. պսակ մ'որ զոր առաջին ան-
գամ (թերեւս և միայն) հայ հանճարը կը յա-
լոզէր կորցիլ բազդի, կոյր դիցուհւոյ, ձեռքէն:
Մատաղ հասակն անեցաւ Այվազովսքի
իրեն հանճարոյն վրայ սքանչացողներ, նոյն
իսկ բարձրաստիճան անձներ, որոնց զարմա-
քը իրայն ամուլ և անպառաւ զովեմանելով
չգոհացաւ, այլ քայլ առ քայլ փառաց ի փառս
բարձրացուց զինքն, ինչպէս ծանօթ է արդէն
ամենուն: Այսու նա Թուստայ Նիկողայոս Ա.

կայսեր առանձին հաճութիւնն ու խնամքն իւր
վրայ կը դարձնէր և տառնալեց տարեկան
հասակին կը յաջորդէր մտնել Բեթթրապուրիի
գեղարուեստից ճեմարանը, առաջին օրէն իսկ
մասնագիտաց և առաջացաւ ուշադրութիւնն առ
ինքն գրաւորով: Այն օրն՝ իրեն փառաց ան-
ժայր չլիթային առաջին օղակն եղաւ, որուն
յաջորդեցին անդադար հետզհետէ ուրիշ օղակ-
ներ եւս, որոնց շարքն այն ատեն միայն դա-
դրեցաւ, երբ ամհուան ցրտութիւնը ստեղծուց
մեծ նկարչին անխոնջ բազուկը, զոր նոյն իսկ
ուխտուն երեք տարեկան հասակը չէր կրցած
գործելէ արգելաւ: Ակալայն իրեն անուան ան-
մահութեանը անտխուր գրաւական և սկզբնա-
տառ այքն՝ եղաւ 1833ի աշնան ցուցանանդե-
սը: Երբուն մեր ուխտաւորանմանայ առաւելող
պատանին ամենուն աչքը կը դիւթէր իւր «Ռդը
ժովի մանկերեսոյթի փայլ» պատկերով, կ'առ-
նուէր արծաթի մետաղ և Նիկողայոս կայսրէն
կ'ընդունէր ի մրցանակ 1000 ռուբլի և միան-
գամայն ուղեկից կ'անուանուէր մեծ դուքս
կոստանդինի Ֆիլիքստիոյ ծոցի ծովանցու-
թեան, և 1837ին նկարելով այդ «Ֆիլեյանտիոյ
ժովի անդորոտքիւնը» ոսկի մետաղի կ'ար-
ժանանար: Երեք տարի վերջ (1840) մեր ու-
սանողն՝ արդէն իսկ մրցանակաւոր և ամենէն
աւելի պատուաւոր տիտղոսներով, կ'անցնէր
յետեւայն Գեղարուեստից ձեմարանի ծախքով
ճանապարհորդութիւն մ'ընելու՝ իւր մտանա-
հելլին մէջ կատարելագործուելու համար: Հոս
իւր օրիւ Այվազովսքիյն ըզմանդակ փառքն
որուն ընթացից հետեւիլ և բարձրանալ թե-
րեւս շատ երկար և հեռու տանի զմեզ. զսահ-
նաք միայն թուելով՝ որ քիչ ժամանակն մէջ,
զոր անցուց նա յետեւայն այս և ուրիշ ան-
գամներ, տիեզերական հոյակ մը ստացաւ իւր
հանճարով. մեծամեծ կայսր և վեհապետք
չբանշաններով պենեցին իւր կուրծքը և ամե-
նէն աւելի հոյակաւոր ճեմարանք և ընկերու-
թիւնք՝ իրենց պատու համարեցան իւր անուան
իրենց անդամաց Թուսոյն մէջ ունենալը:

Ինչ էր Այվազովսքոյն այսուափ հոյակաւո-
լուն պատմութիւն: Ոմանք զրուստեցին իւր ան-
հատաւոր երազութիւնը՝ որով քանի մը վայր-
կեաններու մէջ կը նկարէր կատարակ տեսա-
րաններ. զորս ներկայացնելու համար այլժ-
օրերու, թէ ոչ նաեւ շարաթիւնու կը կարօ-
տէին: Ուրիշներ զովեցին իւր փառ և կենդանի
դոյնները, որոնցով դիտելով առ վայր մը կը
խառնէր, չի կընար որոշել՝ պատկեր է աղբոք
տեսանի թէ իրականութիւն: Եղան և այլք որ
իրեն այլքան մեծ հոյակն արդիւնք համարե-
ցան իւր՝ զընտ. թիւն ամենաճիշդ օրինակելու
կատարեալ յոյժողակութեան, և վերջապէս՝
ամենէն աւելի և և հոյակաւոր նկարիչը

1. Չենք ըսել թէ Այվազովսքի իւր կենաց
մէջ չունեցաւ ամենեւին հակակրօնորներ,
այլ թէ անոնք անհոտանք միայն եղան, մինչ-
դեռ բովանգակ հասարակութիւնը զմայրամբ

միայն կը խօսէր իւր վրայ. և ինչպէս Բազ-
մալիպան ուրիշ առիթու ըսած է, նա կատու
վրայ զրեց իւր ջառագովութիւնը ներկերու
ձեռքով և խայտառակ նախանձորգները:

Այլվազողութեւոյ բովանդակն մեծութիւնն յայնմ համարեցան, որ զհետցաւ իրական տեսարանն մը զհետողջ վրայ բրած աղբըցուութիւնը, կատարեալագոյն յառաջ բերելու նկարագրեալ տեսողներու վրայ իսկ մեծք պատշաճ կը համարենք իւր այս անմասն կատարելութեանց վրայ աւելցնելու դեռ, նախ՝ իրեն բարձր զննչկապիտական ճաշակն, որով զիտէր բնութեան ամենն աւելի զմայլոցնոցիւն և զհեթիլ տեսարանն ու վայրկեանն բմառնել ու ճշդիւ զայն ներկայացնել. և երկրորդ՝ իրեն ստեղծիչ երեւակայութիւնը, որով ամեն օր նորանոր տեսարաններ կը ստեղծէր և մինչեւ իսկ կը համարակէր (առանց չափազանցութեան թերեւս) զեղեւն օր եթէ երեք հարիւր տարի եւս ապրի միտ նոր բան պիտի գտնէ նկարելու. Գրիկն զերազանց յասկութիւններ՝ որոնց մէջ մինչեւ ցայժմ ո՛ր ոք իրեն հաւատարմ գտնուած է, ապիկ զիջիլ ալ զգուսարին է թէ գտնուած է. Եւ յիշուէ Այլվազողութեւոյ մեծ ու փոքր հազարաւոր նկարներու մէջ չկայ մէկն որ բնութեան ամենագեղեցիկ տեսարաններն մին ներկայացնէ, ինչպէս նաեւ անկարելի է գտնել անոնց մէջ ուրիշ մը՝ որ բոստ ամենայնի նմանութիւն ունենայ առաջինին հետ։

Անմասն հանճար է նա երբ ծովը կը պատկերացնէ իւր ամեն իրական և երեւակայական տեսարաններով. թափանցած է նա անոր ամեն մէկ գաղտնեաց, և մէն մի կոհակաց իւրաքանչիւր շարժումներն ուսումնասիրած. Զուրն իրեն համար հմայիլ չիւրէ մէկած է և գրաւած է բոլորովին իւր սիրուն ու միտքը. երբ պիտի նկարէ նա ծով կամ գետ կամ աղբիւր, ներկերն իւր լինչինն առաջ երկթական զրուսթեամբ մը կարծես, շրջ կաթիլներու կը փռուին և կը շարունակ կառուի վրայ, յետոյ՝ լոյս կ'առնէ նկարչին շարժումը. հոգեղան պտուղեղու կամ հայելանման խաղաղ կեցած՝ պայծառ երկիւրն մը իրենց մէջ անդորարքանքն ու համարն. Եւ եթէ ուրիշներ անուշանած են զնա « ծովոյն քաղաքոյն », ներելի չէ՝ մեզի ալ կոչել զինք « ջրոյ աստուծոյն »։ Ո՛վ կրցած է իրեն պէս ներկայացնել նրկայաւոր լիւծիծաղ ջրոյ այն միապաղաղ ահագին քանակութիւնն, որ զարհուրելի ուժով կը թափուի անդունդի մէջ գոլորտից ամպ մը մինչեւ երկինք բարձրացնելով։ Ո՛վ տեսած է իւր « Անշու յուպին Ուկիտա լոսի մէջ » պատկերն առանց աստուծո մը զգալու, կարելի է տեսնել անգալ կերպով այն սեւ ու մթին ամպերը և այդ լեռնաձէւ ալիքները որոնց մէջէն կը բարձրանան երեք կայմոր, բնկղմելու վիճակի մէջ գտնուող նաւու մը յայտարար նշաններ և այն մաշկոյր որոյ մէջ նաւաբեկներն խնդրեալով տազանապալից՝ կը տեսնեն ամենի կոհակը որ իւր բաղնիքներն բով աննդունց մէջ պիտի սուզէ զիրենք։

Մակայն միայն ծովու և բնութեանն տեսարաններ չեն օր Այլվազողութեւոյ անունն անմասնացուին. հաւատարմագոյն յաշտողիկ էր նա ներկայացնելու՝ պատմական նիւթեր և վերացական գաղափարներ։ Դիտենք վայրկեան մը

« Զրեից կարմիր ծովին անցնիլ » որ իրեն զուեւ զօրծոցն կարելի էր համարել, եթէ ուրիշ անթիւ գրողի գործողներ չունենար։ Նկատելն ընտրած է այն վայրկեանը, յորում ամբողջ Եսրայէլացիք յաշտողութեամբ կարմիր ծովէն ելելով, Մովսէս կը բարձրացնէ իւր վրձն. խրճիթի ալը, աստուածային բարկութեան շանթիքը զիրենք հալածող բերաւոր եգիպտացւոց վրայ ինչեղելու համար։ Թուե՛ս և սպիտակ հոծ ամպեր, ճիշդ ինչպէս կը հանդիպի անշե փռթորկային օդեր, պատած են երկինքը, իսկ վարը ծովու մէջ կատաղի ալիքներ կը թաւալին իրարու վրայ և խլացուցիչ շառաւիղ մը՝ զոր տեղ կը կարծես, կը դիմեն ծածկելու եգիպտացւոց աղբիւր։ Տեսարանին աստափը զգացած են նաեւ երկու յետամնաց Եսրայէլացիք, որոնց միոյն ոտքերը միայն ինչպիսի են ջրոյ յանկարծահաս հոտանքին մէջ և իւր ծորունի օր գոնութեամբ, կը ջանալ ցամաք ելլել. իսկ միւսը կիսով չափ գետ ջրոյ մէջ ընկղմած, ոգի ի բռնի կը հնչի ինչքեղեք ազատել վերջաւան մահաւանէ՛ չոս՝ աննկարագրելի վիճակիւն մ'ունի Մովսէս. վսեմ ծեղունի մ'է, ափանց վրայ՝ ծովէն քայլ մը հեռու կանգնած, ալ բազուկն յերկինք բարձրացուցած և ձայնն հորիզոնաձէւ տարածած, սպառնալից և հրամայական դիրքի մը մէջ. լուռոյ ճառագայթներու լայն խորք մը յերկնից կ'իջնէ ուղղակի իւր վրայ, և իրեն ձիւնադոյն մազերն և երկայն մորուաց շլացուցիչ սպիտակութիւնն մը կու տայ։ Աննշմոյց ոյնէն ընդհատ զեղեցիկ են նաեւ իրեն ուրիշ մի քանի նկարներն ուր յայտնապէս կը փայլի Նկարչու վառ երեւակայութիւնն. այսպիսիք են Քիտա, Լուսոյ ստեղծումը, Տիեզերքը և այլն, որոնք արեւմտեի մէն մի հրաշալիք կը համարուին։ Եթէ մեծ էր Այլվազողութեւոյ նկարչական հանճարը, նուազ չէր նաեւ իւր մարդատէր բարբարութիւնը՝ որուն վկայութիւն մը կրնայ համարուիլ այն՝ թէ ոչ ոք բարեգործական նպատակի մը համար զիմեց առնաւ ձեռնառուութիւն խորրելու, առանց իեղնի ընդունելու և առատաձեւ օգնութիւն կամ ուղղակի դրամով և կամ իրեն նկարներով, որոնք մեծ գուժ մարենք աւելի հանգսթեամբ կ'ընդունուէին։ Իրեն մարդասիրութեան յափառական պերճ յիշատակ մը պիտի ըլլայ բովանդակ Թեոդոսիոս քաղաքը իւր ջուրերով, և դարուն ի դարս պիտի չնչէ Լայոն անունն, որով երախտալից քաղաքացիք պատմուցին իրենց մեծ Բարբար, որուն՝ բոլոր ազգին են Բագմալիկն՝ ալ կը մաղթէ Բանգիւս։

Զ. Յ. ԱՊԻՏԵՐԱՆ

1. Բագմալիկն ուրիշ շատ անգամներ ալ առիթ ունեցած է զրուստելու մեծանուն հանգուցեղ ծովանկարիչի օր կրկնակի այցելած է Վանաց և մի քանի նկարներ ընծայած է։ Փափաքողը կրնան կարողել 1874 էջ 330, 1883 էջ 38, 1889 էջ 243, 1890 էջ 173, 1898 էջ 17 ուր կայ զրուած նաեւ իւր կենդանագիրը։